

Չարդոսկիներուն.
 Տենչանքով անհուն
 Հոգիս պիտ' ըղծայ
 Գանձեր՝ զոր չունի:
 Ծարաւ շիղին պես
 Պիտ' ըղծայ անի
 Երկու կաթիլ ջուր
 Շուրթերուն իր կէզ:
 Եւ իր ճակատին՝
 Չովացքը ցրտին,
 ճակատին կըրակ՝
 Չովացքը ցրտին,
 Կարմիր սափորի
 Ջուրին սառնորակ
 Յօղովը բերրի՝
 Կակաջ ձեռքերու...
 Ա՛հ, այս իրիկուն
 Սափորն իր ուսին
 Աղբիւրէն դարձին՝
 Սիրոյս անանուն
 Ջերմ սարսուռներով
 Կը դողայ սօսին...

3. ՄԱՌԱԽՈՒՂ

Եայ շոգոյին կապտորակ, թեւատարած կը նստի
 Աւաններուն լըռանիստ՝ նըւաղումին մէջ ոսկի.
 Կարծես ծուխ մը հողն անդուլ դուրս կու տայ իմ ծերպերէն:

Ու կը խայթէ իմ հոգիս պարապն այս հոծ կապոյտին,
 Բիլ պատմուճան լուսաթել՝ որուն փախեր է կոյսն հին:

Ու մըշուշը կը լայննայ, ու մըշուշը կը լենայ
 Արտերուն մէջ՝ ուր խարտեաշ խուրձերն ինկան գիրկ գրկի: